ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝ *«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ*

Կազմակերպական-իրավական ձևը՝ *փակ բաժնետիրական ընկերություն*

Գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)՝ *ՀՀ, ք. Երևան, Չարենցի 58, բն. 1; հեռախոս՝ (+37410) 572137; ֆաքս՝ (+37410) 575177; էլ-փոստ՝ finar@netsys.am*

Հաշվետվության համարն ու ամսաթիվը՝ *N2, 23.10.2008թ.*

Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ *անվանական արժեկտրոնային պարտատոմս*

Արժեթղթերի քանակը՝ *6,000 (վեց հազար) հատ*

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ *25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ*

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Արթուր Ծատուրյան	Խորհրդի անդամ Գործադիր տնօրենի ժ/պ[1]		23.10.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուզաննա Սահակյան	Խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ		23.10.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Արթուր Ծատուրյան	Խորհրդի անդամ Գործադիր տնօրենի ժ/պ		23.10.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

23 հոկտեմբեր 2008թ.

ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«Էքսպրես Կրեդիտ Յունիվերսալ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ
«Express Credit Universal Credit Organization» CLOSED JOINT-STOCK COMPANY
YEREVAN ARMENIA
00046152

[1] Գործադիր տնօրենի 08.10.2008թ. թիվ 10-08-01 հրամանով 10.10.2008թ.-24.10.2008թ. ընդգրկած ժամանակահատվածում Գործադիր տնօրենի ժ/պ-ի պարտականությունների կատարումը դրվել է Ա. Ծատուրյանի վրա՝ գործադիր տնօրենի գործուղման մեջ գտնվելու հանգամանքով:

3.1.7. Կանոնադրական կապիտալի ավելացում (համարակալումն ըստ ազդագրի)

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի խորհրդի կողմից 2008 թվականի օգոստոսի 27-ի թիվ 08-27-02 և բաժնետերերի արտահերթ ժողովի 2008 սեպտեմբերի 17-ի որոշումներով թողարկվել են 60,000 հատ 2,500 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր և կատարվել է կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն, համաձայն որի «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի չափը կազմում է 305,000,000 ՀՀ դրամ (մինչև գրանցումը այն կազմում էր 155,000,000 ՀՀ դրամ): Լրացուցիչ տեղաբաշխվող սովորական բաժնետոմսերը ձեռք են բերվել սովորական բաժնետոմսերի միակ սեփականատիրոջ՝ Արմեն Արզումանյանի կողմից: Կանոնադրական կապիտալը ամբողջությամբ վճարված է: Կանոնադրական կապիտալի ավելացման հետևանքով կանոնադրության մեջ փոփոխությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 21.10.2008թ. թիվ 1/1010Ա որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 22.10.2008թ.:

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը կազմված է 120,000 (հարյուր քսան հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերից և 2,000 (երկու հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսերից: